ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 010-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԻԿ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱՋՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբջանյան

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու
2024թ. փետրվարի 16-ի թիվ 010-Ա որոշման

Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը

Համայնքի ՏԱՊ-ում ներառված ծրագրի արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը

Ոլորտ 1. Ընդհանուր					
Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում					
Արդյունքային ցուցանիշները		**2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան**			
Տեսակը	**Անվանումը**	**Թիրախ. արժեքը**	**Փաստ. արժեքը**	**Շեղումը**	**Մեկնաբանություն**
Մուտքային	•Համակարգիչների թիվը	179	201	+22	2 համակարգիչ ACTED կազմակերպության կողմից նվիրատվություն: Սիսիան համայնքի խոշորանալու արդյունքում Գորայք համայնքի 18 համակարգիչները ներառվել է գույքացանկում: 2 համակարգիչ ձեռք է բերվել համայնքի կողմից:
	•Աշխատակիցների թիվը համայնքի կենտրոնում	74	60	-18	Թիրախ արժեքի 74 թվի փոխարեն պետք է լիներ 78, որից 18-ը թափուր հաստիքներ են:
	•Աշխատակիցների թիվը բնակավայրերում	108	101	-3	Թիրախ արժեքի 108 թվի փոխարեն պետք է լիներ 104, որից 3-ը թափուր հաստիքներ են:
Ելքային (քանակական)	•Ծրագրային թարմացումների թիվը	4			
	•Ավագանու նիստերի առցանց հեռարձակում-	առկա է			
	•Վերապատրաստված աշխատակիցների թիվը	0			

Ելքային (որակական)	•Սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը, %	90	90	--	
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետ	1տարի			
Վերջնական արդյունքի	Համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների կողմիցմատուցվող ծառայությունների որակը, 0-5 բալ	լավ			
Ծախսեր, հազ. դրամ		**620388.6**			

Ծրագիր 2. **Համայնքային գույքի կառավարում**

Արդյունքային ցուցանիշները		**2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան**			
Տեսակը	**Անվանումը**	**Թիրախ. արժեքը**	**Փաստ. արժեքը**	**Շեղումը**	**Մեկնաբանություն**
Մուտքային	•Օտարվող համայնքային հողերի մակերեսը- քմ	70	2,28729	+0,1931	Թիրախ արժեքի թիվը գույքի կառավարման ցանկում նշված 2,09419 հա է: Շեղումը պայմանավորված է Բնունիս բնակավայրում գտնվող 0,1931 հա հողամասը անհատույց սեփական իրավունքով (նվիրատվություն) ՀՀ-ին օտարելու արդյունքում:
Ելքային (քանակական)	•Ակնկալվող եկամուտներ - հազ. դրամ				
Ելքային (որակական)	Համայնքի գույքի կառավարման տարեկան ծրագիր	առկա չէ			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետ	1 տարի			
Վերջնական արդյունքի	•Համայնքի գույքի կառավարումից առաջացած եկամուտների ավելացում, %	32.7			
Ծախսեր, հազ. դրամ		**0.0**			

Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

Ծրագիր 1. Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում

Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	• Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը	18	73	--	Թիրախ արժեքում պետք է նշված լիներ աղբահանություն և սանիտարական մաքրում իրականացնող աշխատակիցների թիվը, սակայն նշվել է միայն աղբահանություն իրականացնողների թիվը:
	• Տեխնիկական միջոցների քանակը	6	11	+1	Թիրախ արժեքում ներառված չեն եղել սանիտարական մաքրման 4 մեքենա: Շեղումը առաջացել է Սիսիան համայնքի խոշորացման արդյունքում նախկին Գորայք համայնքի հաշվեկշռում գտնվող աղբատար բեռնաթափը Սիսիան խոշորացված համայնքի հաշվեկշռում հաշվելու արդյունքում:
Ելքային (քանակական)	• Աղբատար մեքենաների թիվը -	5	6	+1	Շեղումը առաջացել է Գորայք համայնքի հաշվեկշռում գտնվող աղբատար բեռնաթափը Սիսիան խոշորացված համայնքի հաշվեկշռում հաշվելու արդյունքում:
	• Աղբամանների թիվը	303	302	-	Թիրախ արժեքի թիվը 303-ի փոխարեն 302 է (համակարգչային վրիպակ):
	• Աղբահանության ծառայության հասանելիության ընդլայնում - բնակավայր	2	4	+2	Սիսիան համայնքի խոշորացման արդյունքում աղբահանության ծառայությունից օգտվում են Գորայք համայնքի 4 բնակավայրերը:
	• Աղբահանությունից օգտվող բնակավայրերի թիվը - բնակավայր	12	17	+4	Թիրախ արժեքում ներառված չի եղել Սիսիան քաղաքը և խոշորացման արդյունքում ավելացել է Գորայք համայնքի 4 բնակավայրերը:
Ելքային (որակական)	• Աղբահանության և սանիտարական մաքրման տարածքների հաստատված սխեմաներ և ժամանակացույց	առկա է			
	• Աղբի տեսակավորում	առկա է			
Ելքային (ժամկետայնության)	Աղբահանության նվազագույն հաճախականությունը Սիսիան բնակավայրում/ գյուղական բնակավայրերում /շաբաթական/. անգամ	5/1			
Վերջնական արդյունքի	Աղբահանության և սանիտարական մաքրման իրականացում ըստ հաստատված սխեմաների և ժամանակացույցի	առկա է			
Ծախսեր, հազ. դրամ		141372.0			

Ծրագիր 2. Հանրային հատվածների բարեկարգում, կանաչապատ տարածքների ընդլայնում

Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	• Աշխատակիցների թիվը • Տեխնիկական միջոցների քանակը -միավոր	1	2	--	Թիրախ արժեքում տեխնիկական սխալի պատճառով աշխատակիցների թիվը 1-ի փոխարեն պետք է լինի 2:
Ելքային (քանակական)	• Համայնքային շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում - շենք				
Ելքային (որակական)	• Համայնքի խնամվող կանաչապատ հատվածների տեսակարար կշիռը կանաչապատ հատվածների մեջ, %	60	24,1	--	Սիսիան համայնքի կանաչապատ հատվածը 39000 քմ է, որից խնամվում է 9400 քմ, այն է 24,1%-ը, որը նաև պետք է լիներ թիրախ արժեքի թիվը:
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի	Բազմաբնակարան շենքերի սպասարկման որակի բարելավում %	10			
Ծախսեր, հազ. դրամ					

Ծրագիր 3. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում և զարգացում

Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	• Ավտոաշտարակի ձեռքբերում • Աշխատակիցների թիվը – մարդ • Տրանսպորտային միջոցների քանակը - միավոր	1 3 1	0 3 1	- 1 - --	Ծրագիրը չի իրականացվել համաֆինանսավորում իրականացնող դոնոր կազմակերպության կողմից ֆինանսավորման հետաձգման պատճառով

Ելքային (քանակական)	• Լուսավորվող փողոցների քանակը % • Ջրամատակարարման ապահովում-շուրջօրյա • Կառուցված ՕԿՋ-երի թիվը • Սպանդարյան բնակավայրի մանկապարտեզի անվճար էներգիայի ապահովում • Աղիտու, Վաղատին բնակավայրերում ջրագծերի կառուցում • Շաքի բնակավայրի խմելու ջրի ավազանի և 700գ/մ ջրագծի նորոգում • Ծղուկ բնակավայրի կենցաղի տան արևային կայանի տեղադրում	85% առկա է 1 24.95 կվտ/ժ 700 գ/մ 25.5 կվտ/ժ			Ծրագիրը իրականացվել է: Աղիտու և Վաղատին բնակավարերում խմելու ջրագծերի կառուցման աշխատանքները իրականացվել է 40%-ով, աշխատանքները շարունակվում է, ավարտը նախատեսվում է 2024 թվականի հունիս ամսին: Ծրագիրը իրականացվել է: Ծրագիրը իրականացվել է:
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)	• Ջրամատակարարման ապահովման տևողությունը	շուրջօրյա			
Վերջնական արդյունքի	• Լուսավորության համակարգի պահպանման շնորհիվ երթևեկության անվտանգության աճ %	5%			
Ծախսեր, հազ. դրամ		**290008.8**			

Ոլորտ 3. Կրթություն					
Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ապահովում համայնքում					
Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	•Աշխատակիցների թիվը	218	211	+5	Թիրախ արժեքում ներառվել է նաև 12 թափուր հաստիքները: Փաստացի արժեքում ընդգրկված է նաև Սառնակունք բնակավայրի ՆՈՒՀ-ի 5 աշխատակիցների թիվը:
	•ՀՈԱԿ-ների թիվը	4	5	+1	Սառնակունք բնակավայրի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ը նախատեսված է եղել, որ մինչև տարեվերջ պետք է միանա Սիսիանի թիվ 1 ՆՈՒՀ-ին խմբի կարգավիճակով, սակայն գործընթացը դեռևս ընթացքի մեջ է:
Ելքային (քանակական)	•Ծառայությունից օգտվող երեխաների թիվը	915	781	-134	
	•Սննդի ապահովումը օրվա ընթացքում անգամ	3	3	--	
Ելքային (որակական)					
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի					
Ծախսեր, հազ. դրամ		348319.0			
Ծրագիր 2. Արտադպրոցական դաստիրակության ծառայության մատուցում համայնքում					
Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	•Աշխատակիցների թիվը	102	99	-3	Աշխատակիցներից երեքը ազատվել են աշխատանքից՝ սեփական դիմումի հիման վրա:

	•ՀՈԱԿ-ների թիվը	5	5	--	
Ելքային (քանակական)	•Ծառայությունից օգտվող երեխաների թիվը	652	669	+17	Թվի աճը պայմանավորված է գեղարվեստի և ֆուտբոլի դպրոցներում, ինչպես նաև արվեստի և ստեղծագործության կենտրոնում դիմորդների թվի ավելացմամբ:
Ելքային (որակական)	Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի տես. կշիռը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	14.6	13,03	1,57	
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի	Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից օգտվողների թվի ավելացում, %	2	0,43	1,57	Շեղումը առաջացել է հանրակրթական դպրոցներում ուսումնառության ծանրաբեռնվածության պատճառով երեխաների հաճախելիության նվազմամբ:
Ծախսեր, հազ. դրամ		**206607.0**			

Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում

Արդյունքային ցուցանիշները		**2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան**			
Տեսակը	**Անվանումը**	**Թիրախ. արժեքը**	**Փաստ. արժեքը**	**Շեղումը**	**Մեկնաբանություն**
Մուտքային	•Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը	5	5	--	
Ելքային (քանակական)	•Մշակութային միջոցառումների թիվը	120	135	+15	Թիրախ արժեքում ներառված է նաև ՀՈԱԿ-ների կողմից կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները, ինչպես նաև այլ համայնքների կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցությունը:
	•Միջոցառումներին մասնակիցների մոտավոր թիվը •Զոհված զին՝ ծառայողների հին գերեզմանաքարերի վերափոխում	32500	42500	+10000	Շեղումը առաջացել է փառատոներում ակնկալվելիք մասնակիցների թվի ավելացմամբ:

	•Զոհված զինվոր ծառայողների գերեզմանաքարերի տեղադրում •Գորայք, Սպանդարյան, Ծղուկ, Սառնակունք բնակավայրերում խաղահրապարակների կառուցում •Լոր բնակավայրի դահլիճի գույքի ձեռքբերում	3 4 203			Ծրագիրը իրականացվել է: Ծրագիրը իրականացվել է: Ծրագիրը իրականացվել է:
Ելքային (որակական)	•Մշակութային կյանքի ակտիվացում -%	10			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի	Մշակութային միջոցառումների թվի ավելացում, %	10	12,5	+2,5	Շեղումը առաջացել է փառատոներում ակնկալվելիք մասնակիցների թվի ավելացմամբ:
Ծախսեր, հազ. դրամ		**134100.5**			

Ոլորտ 5. Գյուղատնտեսություն					
Ծրագիր 1.Խթանել գյուղատնտեսության զարգացումը					
Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	• Սպասարկվող ոռոգման ցանցերի երկարությունը- կմ	213	216	+3	Շեղումը առաջացել է Շաղատ բնակավայրում ոռոգման ջրագծի կառուցման արդյունքում:
	• Աշխատակիցների թիվը -	4	7	-3	Շեղումը առաջացել է, քանի որ թիրախ արժեքում ներառված չէ բնակավայրերի աշխատակիցների թիվը:
Ելքային (քանակական)	• Ոռոգվող հողերի մակերեսը, հա	418	433	+15	Շեղումը առաջացել է Շաղատ բնակավայրում ոռոգման ջրագծի կառուցման արդյունքում:
	• Ոռոգման համակարգից օգտվող բնակավայրերի թիվը	27	27	----	
Ելքային (որակական)	• Վթարների թվի նվազեցում - %	3			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի					
Ծախսեր, հազ. դրամ		91515.0			

Ոլորտ 6. Տրանսպորտ					
Ծրագիր 1. Ճանապարհների պահպանում և շահագործում					
Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ. արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային	Համայնքային փողոցների թիվը – փողոց	25	25	--	
Ելքային (քանակական)	• Տեղադրված ճանապարհային երթևեկության նշանների թիվը - նշան • Գծանշված փողոցների թիվը – փողոց • Իսրայելյան, Ադամյան, Պ. Սևակ փողոցների ասֆալտապատում	25 25	25 28	-- +3	Շեղումը առաջացել է Իսրայելյան, Ադամյան, Պ.Սևակ վերանորոգված փողոցների գծանշման արդյունքում:
Ելքային (որակական)	Հետիոտնի և տրանսպորտի հարմարավետ երթևեկություն	առկա է			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի	Ճանապարհների կահավորման միջոցով երթևեկության անվտանգության աճ - %	5	5	--	
Ծախսեր, հազ. դրամ		**324231.7**			

Ոլորտ 7. Սոցիալական պաշտպանություն					
Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով ընտանիքներին					
Արդյունքային ցուցանիշները		2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան			
Տեսակը	Անվանումը	Թիրախ.արժեքը	Փաստ. արժեքը	Շեղումը	Մեկնաբանություն
Մուտքային					
Ելքային (քանակական)	Համայնքի սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող աջակցություն ստացած բնակիչների թիվը	27	95	-32	Աջակցությունը տրամադրվել է ներկայացված դիմումների համաձայն: Թիրախ արժեքում նշվել է այդ պահին տրամադրված աջակցությունների թիվը, սակայն նախատեսված է եղել 127 ընտանիքի համար:

Ելքային (որակական)	-	-			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի	Դրամական աջակցությունների մասին սոցիալական և բնակարանային հարցերի ուսումնասիրության հանձնաժողովի արձանագրություններ	առկա են			
Ծախսեր, հազ. դրամ		**3900.0**	**2580.0**	-1320.0	

Ոլորտ 8. Քաղաքացիական պաշտպանություն					
Ծրագիր 1. Քաղաքացիական պաշտպանության որակի բարելավում					
Արդյունքային ցուցանիշները		**2023 թ., 1-ին կիսամյակ/տարեկան**			
Տեսակը	**Անվանումը**	**Թիրախ.արժեքը**	**Փաստ. արժեքը**	**Շեղումը**	**Մեկնաբանություն**
Մուտքային	Քաղաքացիական պաշտպանության տեխնիկական միջոցների ձեռքբերում		31	----	Էժան գնային առաջարկի արդյունքում առաջացել է գումարի տնտեսում:
Ելքային (քանակական)					
Ելքային (որակական)	Քաղաքացիական պաշտպանության կապի համակարգի և տեղեկատվության բարձրացման որակական աճ%	10			
Ելքային (ժամկետայնության)	Ծրագրի իրագործման ժամկետը	1 տարի			
Վերջնական արդյունքի					
Ծախսեր, հազ. դրամ		**940.0**	**925**	-15	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 011-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջներով և «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԻԿ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱՋՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **Ա. Հակոբջանյան**

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու
2024թ. փետրվարի 16-ի թիվ 011-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են Սիսիան համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:
2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն են՝

   հանրային սնունդ (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպում,

   հանրային սննդի ծառայություն՝ սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր,

   խոհարարական արտադրանք՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների և կիսապատրաստվածքների համախումբ,

   ճաշացուցակ՝ կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների ցուցակ, որը վաճառողն առաջարկում է սպառողին՝ զանգվածի և գնի նշումով,

   հանրային սննդի օբյեկտներ՝ հանրային սննդի ծառայության իրականացման համար կառուցված կամ այդ նպատակին հարմարեցված ու սարքավորված շենք, շինություն կամ այլ վայր,

   վաճառող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն աշխատանքներ է կատարում խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպման ուղղությամբ:
3. Հանրային սննդի օբյեկտները դասակարգվում են հետևյալ տեսակների՝

   ա/ ճաշարաններ,
   բ/ ռեստորաններ,
   գ/ սրճարաններ,
   դ/ բարեր,
   ե/ բուֆետներ,
   զ/ խոհարարական արտադրանքի պատրաստման և իրացման այլ օբյեկտներ:
4. Հանրային սննդի կազմակերպման և իրացման համար իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ստանալ թույլտվություն, որը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:
5. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեխնոլոգիական գործընթացն ապահովող համապատասխան սարքավորումներով և հանրային սննդի գործունեությունն իրականացնելու համար նախատեսված գույքով:
6. Բոլոր տեսակի հանրային սննդի օբյեկտները պետք է ունենան դեպի օբյեկտի մուտք տանող մատուցային և հետիոտնային ճանապարհներ, անհրաժեշտ տեղեկատվական ցուցակներ, սանհանգույցներ:
7. Հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության դեպքում:

8. Թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը վճարելու դեպքում:
9. Ուսումնական հաստատություններում, մանկական և բուժկանխարգելիչ կազմակերպություններում գործող հանրային սննդի օբյեկտներում արգելվում է ալկոհոլային խմիչքների իրացումը:
10. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջները բավարարող ցուցանակով:
11. Հանրային սննդի օբյեկտը պետք է ապահովված լինի տեսակը հաստատված և ստուգաչափված չափման միջոցներով:
12. Օրենքով սահմանված շինությունների ներսում հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի որոշմամբ՝ համայնքի ավագանու կողմից սահմանված չափով տեղական տուրքը յուրաքանչյուր օբյեկտի համար առանձին վճարելու դեպքում:
13. Համայնքի տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն չի տրվում:
14. Վաճառողն ինքնուրույն է որոշում սպառողներին սպասարկելու ձևերը և մեթոդները:
15. Վաճառողը պետք է ունենա ճաշացուցակ, որը ներկայացվում է սպառողին (գնորդին):
16. Ճաշացուցակում նշվում է խոհարարական արտադրանքի զանգվածը և վերջինիս այն գինը, որը ենթակա է սպառողի կողմից վերջնական վճարման:
17. Վաճառողը յուրաքանչյուր աշխատողին ապահովում է իր ստորագրությամբ հաստատված անվանաքարտով՝ աշխատողի լուսանկարով, անվան, ազգանվան և ազգային ստանդարտին համապատասխան պաշտոնի նշմամբ:
18. Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողը պարտավոր է կրել անվանաքարտ՝ իր լուսանկարով, անվան, ազգանվան և անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարի նշմամբ:
19. Անվանաքարտ կրում են համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտի աշխատողները՝ աշխատավայրում գտնվելու ժամանակահատվածում:
20. Անվանաքարտն աշխատողին տրվում է աշխատանքի ընդունման հրամանի հետ կամ աշխատանքային պարտականությունների անցման պահին:
21. Անվանաքարտի վրա հայերեն տպագիր տառերով լրացվում է՝
    ա) կազմակերպության ֆիրմային անվանումը,
    բ) աշխատողի անունը, ազգանունը,
    գ) աշխատողի զբաղեցրած պաշտոնը:
22. Անվանաքարտը պետք է պարունակի աշխատողի գունավոր լուսանկարը՝ նվազագույնը 30մմ x 40մմ չափսերով:
23. Անվանաքարտը վավերացվում է գործատուի ստորագրությամբ և կնիքով:
24. Անվանաքարտը աշխատողը կրում է իր արտահագուստի կամ հագուստի վրա, կամ այն դրվում է արտահագուստի վրա թափանցիկ նյութից կարված գրպանիկի մեջ:
25. Անվանաքարտ կրելու կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության տարածքում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 29 օգոստոսի 2005 թվականի N 182-Ն հրամանով:
26. Վաճառողն ապահովում է հանրային սննդի օբյեկտի աշխատողների աշխատանքային արտահագուստ կրելը:

27. Աշխատողներից խոհարարը, հրուշակագործը պետք է ունենան համապատասխան մասնագիտական կրթության կամ մասնագիտական պատրաստվածության մասին դիպլոմ կամ վկայական:
28. Մասնագիտական պատրաստվածության ծրագրերը համաձայնեցվում են կրթության, ինչպես նաև առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան լիազոր մարմինների հետ:
29. Մատուցողի ներկայացրած հաշվում (որի երկրորդ օրինակը սահմանված կարգով մնում է վաճառողի մոտ) նշվում են նրա ազգանունը, սպասարկման օրը, կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի, գնովի ապրանքների անվանումները, քանակը, զանգվածը և վճարման ենթակա վերջնական գինը:
30. Հանրային սննդի ոլորտին վերաբերվող այն նորմերը, որոնք սահմանված չեն սույն կանոններով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:
31. Սույն կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի միջոցով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ լիազոր տեսչական մարմնի միջոցով:
32. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Կ. ԻՎԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 012-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով և «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԻԿ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱՋՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբջանյան

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 16-ի թիվ 012-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգը (այսուհետ՝ կարգ) և ընդունվել է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
2. Արտաքին գովազդն (այսուհետ՝ գովազդ) իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկատվությունների տարածումն է բնակավայրերում՝ տարբեր տեխնիկական միջոցների օգնությամբ (վահանակների, գրաժապավենների, լուսատախտակների, պլակատների, ազդագրերի, հայտարարությունների և այլնի) անորոշ թվով անձանց շրջանում և կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական և իրավաբանական անձի, ապրանքի կամ նախաձեռնությունների նկատմամբ:
3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշման պահանջներին համապատասխան տեղադրվող ցուցանակների վրա զետեղվող տեղեկատվությունը գովազդ չի համարվում:
4. Սույն կարգը տարածվում է բոլոր այն տարածքների վրա, որտեղ պետք է տեղադրվի գովազդը:
5. Սիսիան համայնքի սեփականություն համարվող հողամասի վրա գովազդի միջոց տեղադրելու համար Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով սահմանված կարգով, սույն կարգին և պայմաններին համապատասխան, Սիսիան համայնքի ղեկավարին դիմում ներկայացրած գովազդատուին օգտագործման իրավունքով տրամադրվում է հողամաս՝ կնքելով հողօգտագործման համապատասխան պայմանագիր, հետագայում տվյալ կողմի հետ նախապատվության իրավունքով երկարաձգելու պայմանով:
6. Այն դեպքում, երբ գովազդի միջոցը տեղադրվում է համայնքային սեփականություն չհանդիսացող տարածքում (կամ դրանց օգտագործմամբ), ապա գովազդի միջոցի տեղադրելու թույլտվության մասին որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ տվյալ տարածքի սեփականատիրոջ կամ տարածքի օգտագործողի համաձայնության առկայության դեպքում: Ընդ որում, գովազդատուի և տարածքի սեփականատիրոջ միջև հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրով:
7. Գովազդի միջոց տեղադրելու թույլտվության մասին որոշման նախագծին կցվում է գովազդատուի ու տարածքի սեփականատիրոջ միջև կնքված պայմանագրի պատճենը:
8. Գովազդի տեղադրումը թույլատրվում է, եթե այն համապատասխանում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և

բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1422-Ն որոշման պահանջներին:

II. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9. Սիսիան համայնքի տարածքում գովազդ տեղադրելու թույլտվությունը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի համաձայն տրվում է Սիսիան համայնքի ղեկավարի որոշմամբ:
10. Համայնքի ղեկավարի որոշմանը կցվում են թույլտվությունը և գովազդի էսքիզը՝ համաձայն սույն կարգին կցված Ձև 1-ի և Ձև 2-ի:
11. Գովազդային միջոց տեղադրելու համար գովազդատուն դիմում-հայտ է ներկայացնում Սիսիան համայնքի ղեկավարին՝ նշելով իր անունը, ազգանունը, հաշվառման վայրը, գովազդի տեղադրման վայրը և ժամկետը, ինչպես նաև հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:
12. Հայտին կցվում է համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի միջոցի էսքիզը, որտեղ նշվում են գովազդի արտաքին չափերը, գովազդի տեղադրման ձևը (վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պլակատներ և այլն) և տեխնիկական լուծումները, իսկ դեղերի, բուժտեխնիկայի և բուժական մեթոդների գովազդի դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը:
13. Սիսիան համայնքի ղեկավարը գովազդի միջոց տեղադրելու համար գովազդատուից դիմում-հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո պարզում է գովազդային միջոցի համապատասխանությունը կարգի և պայմանների պահանջներին (եթե այն թերի է, վերադարձվում է՝ թերությունը վերացնելու և նորից 15-օրյա ժամկետում ներկայացնելու համար), և 15 օրվա ընթացքում համայնքի ղեկավարի որոշմամբ տրվում է գովազդ տեղադրելու թույլտվություն, որում նշվում են՝ գովազդատուի անվանումը, գովազդի չափերը, տեղադրման ձևը, գովազդային նյութերի անվանումը, թույլտվության գործողության ժամկետը և կցվում է գովազդի էսքիզը:
14. Թույլտվության որոշման նախագծերը նախապատրաստում է Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժինը կամ համապատասխան համայնքային պաշտոնատար անձը՝ նախագծին կցելով համապատասխան եզրակացությունը:
15. Սույն կարգի 4-րդ կետի համապատասխան՝ հատկացված տարածքի նույն հասցեում գովազդ տեղադրելու համար մեկից ավելի գովազդատուների հայտերի առկայության դեպքում Սիսիան համայնքի ղեկավարը «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հայտարարում և անց է կացնում մրցույթ, որի արդյունքներով մրցույթի հաղթողին տրվում է գովազդի տեղադրման թույլտվություն:
16. Գովազդի միջոց տեղադրելու վերաբերյալ գովազդատուի դիմում-հայտը 15 օրյա ժամկետում կարող է մերժվել այն դեպքում եթե՝
    1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն կարգի և պայմանների պահանջներին.
    2) խախտվում են «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) գովազդի միջոցի տեղադրմամբ խոչընդոտվում է ճանապարհային երթևեկությունը կամ քաղաքացիների անցուդարձը, խախտվում են այլ անձանց օրենքով պաշտպանված իրավունքներն ու շահերը:

17. Գովազդային միջոց տեղադրելու հայտը մերժելու դեպքում՝ պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու հիմքերը:
18. Գովազդային նյութերը գովազդային միջոցների վրա տեղադրելու ժամանակ, ինչպես նաև արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխման դեպքում, գովազդատուն մինչև գովազդային նյութերի տեղադրումը կամ արդեն տեղադրված գովազդվող տեղեկատվության փոփոխումը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Սիսիան համայնքի ղեկավարին՝ կից ներկայացնելով համապատասխան պատկերով և գրառումներով գովազդի էսքիզը, որտեղ նշվում են նաև գովազդի արտաքին չափերը: Գովազդի էսքիզը համաձայնեցվում է Սիսիան համայնքի ղեկավարի հետ:
19. Գովազդը պետք է համապատասխանի «Գովազդի մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, սույն կարգի, պայմանների և այլ իրավական ակտերի պահանջներին:
20. Գովազդի տեղադրման միջոցի մոնտաժային աշխատանքները կատարվում են հայտատուի պատվերով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մշակված և Սիսիան համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծով:
21. Գովազդի միջոց տեղադրելու համար գովազդակիրն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում գովազդի տեղադրման միջոցի մոնտաժման ապահովության և դրա անվթար շահագործման համար:
22. Գովազդատուն իրավասու չէ գովազդի տեղադրման համար իրեն տրված թույլտվությունը փոխանցել կամ օտարել այլ անձի:
23. Գովազդ տեղադրելու թույլտվության ժամկետը լրանալու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու, լուծելու դեպքում գովազդատուն պարտավոր է ողջամիտ ժամկետում իր միջոցներով ապամոնտաժել գովազդը և դրա տեղաբաշխման միջոցները, իսկ զբաղեցրած տարածքը բերել նախկին վիճակին:
24. Սույն կարգով նախատեսված պարտավորությունները գովազդատուի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Սիսիան համայնքի ղեկավարի որոշման համաձայն՝ գովազդի (գովազդային միջոցի) ապամոնտաժումն իրականացվում է համայնքի կողմից՝ օրենքով սահմանված կարգով գովազդատուից ստանալով համապատասխան փոխհատուցում:

III. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

25. Սիսիան համայնքի ավագանին համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրքի դրույքաչափերը սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
26. Այն դեպքում, երբ թույլտվության և պայմանագրի գործողության ընթացքում գովազդվող տեղեկատվությունը փոփոխվում է, որի համար օրենքով նախատեսված է տեղական տուրքի այլ դրույքաչափ, գովազդատուն վճարումը կատարում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Սիսիան համայնքի ավագանու կողմից հաստատված համապատասխան դրույքաչափերով:

27. Սույն կարգով նախատեսված հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Սիսիան համայնքի ավագանու կողմից:
28. Սույն կարգով համապատասխան վճարված գումարներն ուղղվում են Սիսիան համայնքի բյուջե:
29. Սիսիան համայնքի տարածքում գովազդ տեղադրելու գործընթացի նկատմամբ հսկողությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է Սիսիան համայնքի ղեկավարը, իսկ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը՝ ՀՀ Սյունիքի մարզպետը:
30. Գովազդային օրենսդրության պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ԻՎԱՆՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 16-ի թիվ 012-Ն որոշման

ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները (այսուհետ՝ պայմաններ) մշակվել են «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգին» (այսուհետ՝ կարգ) համապատասխան:
2. Սիսիան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի (այսուհետ՝ գովազդ) միջոցների տեղադրումը թույլատրվում է սույն կարգի և պայմանների պահանջներին համապատասխան:

II. ԳՈՎԱԶԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

3. Գովազդի միջոց են համարվում Սիսիան համայնքի տարածքում տեղադրվող գովազդային տեղեկատու կրողները՝ անկախ շենքերի, շինությունների և հողամասերի սեփականության ձևից: Դրանց թվում են վահանակային կայանքները (վահանակները), տանիքային կայանքները, մեծանկարները (պաննո), էկրանները, բարձակները, ցուցատախտակները, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարները (մարկիզ), գրաժապավենները (տրանսպարանտ) և այլն:

III. ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Գովազդ տեղադրելուն ներկայացվող պահանջները՝
   1) գովազդի միջոցները չպետք է՝
      ա. խոչընդոտեն ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը, փողոցների ու մայթերի անցմանը, խանգարեն փողոցների ու մայթերի մեքենայացված մաքրմանը,
      բ. սահմանափակեն տեսանելիությունը ավտոճանապարհների վրա,
      գ. առաջացնեն երթևեկության մասնակիցների կուրացում լույսով, այդ թվում նաև անդրադարձող,
      դ. արգելք հանդիսանան հետիոտնի շարժմանը,
      ե. լինեն ճանապարհների վտանգավոր հատվածներում և տեղադրվեն լուսամփոփների ու ճանապարհային կանգնակների վրա.
   2) ցանկացած տիպի գովազդի միջոցների տեղադրումը պետք է հիմնավորել համապատասխան նախագծային և տեսողական ընկալման դիտակետից.
   3) գովազդ տեղադրել չի թույլատրվում՝
      ա. բնակելի շենքերի մոտ, եթե դրանք հանդիսանում են աղմուկի, տատանման, հզոր ճառագայթման և էլեկտրամագնիսական դաշտի աղբյուր,

բ. թանգարաններում, պատմական և ճարտարապետական հուշարձանների վրա, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների շենքերի վրա,

գ. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա և դրանց տարածքներում (պետական հաշվառման վերցրած պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակույթային այլ արժեք ունեցող կառույցների, դրանց համակառույցների և համալիրների, իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքների վրա, ինչպես նաև պատմամշակութային արգելանոցներում),

դ. ճանապարհային ցանցում, երբ այն անհամապատասխան է ճանապարհատրանսպորտային տվյալ իրավիճակի հետ և նմանություն ունի (արտաքին տեսքով, պատկերով և ձայնային էֆեկտով) ճանապարհային նշանների, ճանապարհային երթևեկության կազմակերպման և այլ տեխնիկական միջոցների հետ.

4) Սիսիան համայնքի հրապարակներում, ինչպես նաև դրանց համար մուտքեր և ելքեր հանդիսացող տարածքների առանձին տեղերում կարող է տեղադրվել գովազդ, եթե այն չի խոչընդոտում ճանապարհային երթևեկության ապահովմանն ու անվտանգությանը և հրապարակների կառուցապատման տեսողական ընկալմանը:

IV. ԳՈՎԱԶԴԻ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Վահանակային կայանքները (վահանակները) տեղեկատվության համար մակերես նախատեսող կոնստրուկցիաներ են և բաղկացած են հիմքից, հիմնակմախքից (կարկաս) և տեղեկատու դաշտից.

1) Տեղեկատու դաշտի չափի տեսակներն են՝
   ա. մեծ չափերի - 3մx4մ, 3մx6մ և այլ չափերի,
   բ. միջին չափերի - 1.8մx1.2մ, 2մx3մ,
   գ. փոքր չափերի - 0.6մx0.9մ և ավելի փոքր չափերի.
2) վահանակներին ներկայացվող պահանջներն են՝
   ա. երկկողմանի կատարում,
   բ. միակողմանի կատարում, որի դեպքում գովազդի հակառակ կողմը պարտադիր դեկորատիվ ձևավորում է.
3) Սիսիան համայնքի կենտրոնական հատվածի սահմաններում թույլ է տրվում 0.6մx0.9մ, 1.8մx1.2մ, ինչպես նաև 3մx4մ մակերեսով տեղեկատու դաշտով վահանակների տեղադրումը.
4) Սիսիան համայնքի կենտրոնական հատվածում տեղադրվող տեղեկատու դաշտով գովազդային վահանակի կրող հիմնասյան դիրքը պետք է լինի միայն ուղղահայաց.
5) Սիսիան համայնքում 3մx6մ և այլ չափերի տեղեկատու դաշտով գովազդային վահանակների տեղադրումը թույլատրվում է համապատասխան նախագծային հիմնավորման առկայության դեպքում.
6) Սիսիան համայնքի կենտրոնական հատվածից դուրս կարող են լինել 1.8մx1.2մ, 3մx4մ, 3մx6մ տեղեկատու դաշտով և այլ չափերի վահանակներ.
7) մայրուղիներում և պողոտաներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝
   ա. 15քմ – 18քմ և այլ չափերի 150մ-200մ,
   բ. 10քմ – 15 քմ՝ 100մ – 150մ,

գ. 6քմ – 10քմ՝ 50մ – 75մ,
դ. 4քմ – 6քմ՝ 30մ – 50մ,
ե. 2քմ – 4քմ՝ 15մ – 25մ,
զ. մինչև 2քմ՝ 10մ – 15մ.

8) նեղ փողոցներում և նրբանցքներում մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև եղած հեռավորությունը պետք է կազմի առնվազն՝
ա. 10քմ – 12քմ՝ 50մ – 75մ,
բ. 6քմ – 10քմ՝ 30մ – 50մ,
գ. 4քմ – 6քմ՝ 20մ – 30մ,
դ. 2քմ – 4քմ՝ 10մ – 20մ,
ե. մինչև 2քմ՝ 10մ.

9) մասնագիտական փորձաքննություն անցած և համաձայնեցված նախագծերի առկայության դեպքում կարող են օգտագործվել կոնստրուկցիաներ, որոնց տեղադրումը համապատասխանում է մայրուղիների, փողոցների և քաղաքային գոտիների արտաքին ձևավորմանը ներկայացվող պահանջներին.

6. Շենքերի, շինությունների, ինչպես նաև Սիսիան համայնքի բարեկարգման տարրերի վրա տեղադրվող գովազդի և տեղեկատվության մնայուն միջոցների տեսակներն են՝

1) տանիքային կայանքները ծավալային կամ մակերեսային կոնստրուկցիաներ են, որոնք տեղադրվում են ամբողջովին կամ մասամբ՝ շենքի ճակատային մասում կամ տանիքին.
ա. տանիքային կայանքները բաղկացած են կոնստրուկցիայի կրող մասի ամրակցման տարրերից և տեղեկատու կայանքից,
բ. տանիքային կայանքները պետք է ունենան հակահրդեհային և հոսանքի վթարային անջատման համակարգ,
գ. ամրակցման տարրերը, ինչպես նաև կոնստրուկցիայի կրող մասի հակառակ կողմը պետք է ծածկվեն դեկորատիվ պանելով,
դ. տանիքային կայանքի տեղադրման հայտերն ընդունվում են պատվիրատուի կողմից մասնագիտական փորձաքննություն անցած կոնստրուկցիաների և համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված նախագծի առկայության դեպքում:

2) պատի մեծանկարներ (պաննո) են կոչվում գովազդի այն միջոցները, որոնք տեղադրվում են շինությունների պատերին հետևյալ ձևերով՝
ա. պատկեր (տեղեկատվական դաշտ), որն անմիջապես շերտածածկում է պատը, պատկերի կոնստրուկցիան հավաքվում է ամրակցման տարրերից, հիմնակմախքից և տեղեկատու դաշտից,
բ. պատի մեծանկարները կատարվում են անհատական նախագծի հիման վրա,
գ. պատի մեծանկարները պարտադիր պետք է ունենան համապատասխան փորձաքննություն անցած կոնստրուկցիաների նախագիծ,
դ. պատի մեծանկարների տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է կոնստրուկցիայի կամ անմիջական չափերով.

3) բարձակ (կոնսոլային կոնստրուկցիա) են կոչվում երկկողմանի հարթակային վահանակները, որոնք ամրակցվում են կայմասյուններին կամ շենքերի վրա: Համապատասխան հիմնավորման դեպքում թույլատրվում է բարձակները տեղադրել համայնքային լուսավորման և կոնտակտային ցանցերի կրող կոնստրուկցիաների վրա՝
ա. բարձակները պետք է լինեն երկկողմանի տեսքով և ունենան ներքին լուսավորում,
բ. հիմքերի վրա (ուղղահայաց) տեղադրվող բարձակների տիպային չափերն են՝ 1.8մx1.2մ (մայրուղիների, պողոտաների, հրապարակների համար), 0.6մx0.9մ, 1.0մx0.7մ (նեղ փողոցների և նրբանցքների համար) և ավելի փոքր:

Շահագործման անվտանգության նպատակով բարձակները տեղադրվում են հողի մակերևույթից ոչ պակաս, քան 3 մետր բարձրության վրա:
գ. հիմքերի վրա տեղադրված բարձակները տեղադրվում են երթևեկելի մասից դուրս՝ մայթի կողմը: Արգելվում է մեկից ավել բարձակների տեղադրումը մեկ հիմքի վրա,
դ. բարձակի տեղեկատու դաշտի մակերեսը հաշվարկվում է երկու կողմերի ընդհանուր մակերեսով.

7. Կրկնաձիգ գրաժապավենը (տրանսպարանտ) գովազդի տեղեկատվության միջոց է: Այն բաղկացած է հիմքից, ամրացման սարքավորումից և տեղեկատու պատկերից՝
   1) գրաժապավենների հեռավորությունն իրարից պետք է լինի 50մ-ից ոչ պակաս,
   2) գրաժապավենների բարձրությունը պետք է լինի երթևեկության գծի համեմատ 5մ-ից ոչ պակաս,
   3) տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է երկու կողմերի մակերեսով:
8. Էկրանավորող սարքավորումները գովազդի և տեղեկատվության միջոց են՝
   1) դրանց կոնստրուկցիան ներառում է էկրանավորող (վերարտադրող) սարքավորման մակերես (էկրան) կամ տեղեկատու պատկեր.
   2) Հարթ պատկերների համար նախատեսված տեղեկատու դաշտի մակերեսը որոշվում է էկրանավորող պատկերի մակերեսով:
9. Գովազդի վահանակների միջև եղած հեռավորությունն ըստ տրանսպորտային միջոցների թույլատրվող արագության պետք է կազմի՝
   1) 60 կմ/ժ թույլատրվող արագությամբ փողոցների համար մեկ ուղղությամբ երկու վահանակների միջև հեռավորությունը՝
      ա. 18քմ – 150մ,
      բ. 15քմ – 100մ,
      գ. 6քմ – 50մ,
      դ. 2քմ – 25մ
   2) 60 կմ/ժամ թույլատրվող արագությունից պակաս փողոցների համար մեկ ուղղությամբ երկու հարևան վահանակների միջև հեռավորությունը՝
      ա. 18քմ – 80-100մ,
      բ. 6քմ – 45-50մ,
      գ. 2քմ – 20-30մ
10. Գովազդային վահանակների ներքևի եզրը պետք է տեղադրված լինի փողոցի մակերեսից 6մ-ից ոչ պակաս բարձրության վրա:
11. Հենասյան հիմքերը հողի ծածկույթում պետք է տեղադրվեն քաղաքաշինական նորմերին և շինարարական տեխնոլոգիաներին համապատասխան՝ մեկ ամսվա ընթացքում վերականգնելով սիզամարգի ծածկույթը:
12. Չափորոշիչներում չնշված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի N 270 որոշմամբ հաստատված ցանկում չընդգրկված 2.0 քառակուսի մետրից ավելի մակերեսով ֆիրմային նշանների և գովազդվող տարբեր ապրանքանշանների տեղադրումը թույլատրվում է Սիսիան համայնքի ղեկավարի որոշմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Կ. ԻՎԱՆՅԱՆ

Ձև 1

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ -

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ «.....».....*20.....թ.*

Թույլատրված գործունեության անվանումը՝

_____

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝

_____

_____

_____

Գովազդի տեղադրման վայրը/վայրերը և չափերը (քմ)՝

_____

Թույլտվության գործողության ժամկետը՝

«.....».....*20.....թ.*-ից մինչև «.....».....*20.....թ.*-ը:

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ԷՍՔԻԶ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 013-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով և 59-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարման և ամենամյա գույքագրման փաստաթղթերի կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԻԿ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱՋՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **Ա. Հակոբջանյան**

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու
2024թ.փետրվարի 16-ի թիվ 013-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարումը սահմանվում է որպես համայնքային գույքի գույքագրման և կառավարման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինի կողմից քաղաքականության մշակում, հաստատում և իրականացում:
2. *Համայնքային գույքի կառավարման նպատակներն են.*
   1) համայնքային գույքի կառավարման (տնօրինում, տիրապետում, օգտագործում, այդ թվում և գույքի գրավադրում) արդյունավետության բարձրացում,
   2) համայնքի եկամուտների ավելացում,
   3) համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:
3. *Համայնքային գույքի կառավարման խնդիրներն են.*
   1) նկարագրել համայնքի ՏԻՄ-երի կողմից գույքագրման կազմակերպման և անցկացման գործընթացի հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների, լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացակարգերը,
   2) համայնքային գույքի հաշվառման, պահպանման, տնօրինման ու օգտագործման համայնքային միասնական քաղաքականության հիմնադրույթների մշակում և դրանց իրականացում,
   3) ներկայացնել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (շարժական և անշարժ) ընդհանուր նկարագրությունը,
   4) համայնքային գույքի կառավարման գործընթացների մեթոդական ապահովում:
4. Համայնքային գույքի կառավարման բնագավառում համայնքի ղեկավարի հանձնարարությամբ քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները համայնքապետարանի աշխատակազմում ապահովում են անշարժ գույքի կառավարման մասով՝ աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի և շինությունների, քաղաքաշինության բաժինը՝ քաղաքաշինական նշանակության հողերի և շինությունների, շարժական և այլ գույքի մասով՝ աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժինները, ՆՈՒՀ-երի, արտադպրոցական հաստատությունների և մշակույթի տան գույքի մասով՝ աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժինը:

II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Համայնքային գույքի կառավարման վերաբերյալ նշված բաժինների կողմից իրականացվում է հետևյալ գործառույթները՝
   1) համայնքի ղեկավարին ներկայացվում է առաջարկություններ համայնքային գույքի կառավարման, սեփականության իրավունքի ճանաչման և արդյունավետ օգտագործման վերաբերյալ,
   2) մասնակցում է համայնքային գույքի գույքագրման աշխատանքներին, որոնց արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացնում է հաշվետվություններ,
   3) իրականացնում է համայնքային գույքի հաշվառման աշխատանքներ և համայնքային գույքը ներկայացնում պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

ժյուռեհսն կպտի ուսկոհր Ալդյուռեմ ուսկոհր ,Ալդրհր յուսեռմ կեռ ,Ալդրհր ոկմեդրմրպպ ,Ալդրհր ոկմեդրմրպպ ,Ալդրհր ոկմեդրմրպպ

11. Նյութական պատասխանատու անձինք տալիս են հայտարարություն այն մասին, որ մինչև գույքագրում սկսելը, համայնքի ակտիվների մուտքի և ելքի բոլոր փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն:
12. Գույքագրման հանձնաժողովը ապահովում է համայնքի ակտիվների ու պարտավորությունների փաստացի մնացորդների ամբողջական և ճշգրիտ գրանցումը գույքագրման ցուցակներում:
13. Գույքագրման աշխատանքներն իրականացնելիս, համայնքի ղեկավարը պարտավոր է ստեղծել բոլոր պայմանները՝ սահմանված ժամկետներում գույքի փաստացի առկայության լրիվ և ճիշտ ստուգումն ապահովելու համար:
14. Համայնքի ակտիվների փաստացի առկայության ստուգումը կատարվում է նյութական պատասխանատու անձի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա մասնակցության ապահովումն անհնարին է:
15. Գույքագրման ցուցակները կարող են կազմվել ինչպես տպագիր, այնպես էլ ձեռագիր տեսքով:
16. Գույքագրվող ակտիվների անվանումը և չափի միավորները պետք է համապատասխանեն հաշվապահական հաշվառման մեջ ընդունված անվանացուցակին և չափի միավորներին:
17. Գույքագրման ցուցակները ստորագրում են գույքագրման հանձնաժողովի բոլոր անդամները և նյութական պատասխանատու անձինք: Գույքագրման յուրաքանչյուր ցուցակի վերջում նյութական պատասխանատու անձինք գրառում են կատարում՝ ակտիվների ստուգումը գույքագրման հանձնաժողովի կողմից իրենց ներկայությամբ իրականացնելու, գույքագրում իրականացնող աշխատակիցների նկատմամբ որևիցե բողոք չունենալու և ցուցակում նշված ակտիվները ի պահ ընդունելու վերաբերյալ:
18. Համայնքային անշարժ գույքի հաշվառում է համարվում համայնքային անշարժ գույքի վիճակի և չափերի, նպատակային նշանակության, ինչպես նաև օգտագործողների և օգտագործման ձևերի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը:
19. Համայնքային անշարժ գույքի հաշվառման ենթակա օբյեկտներ են համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքը՝ հողամասերը, շենքերը, շինությունները, տարածքները, արհեստական կառույցները և այլ անշարժ գույքը:
20. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տեղեկություններն օգտագործվում են անշարժ գույքի մշտադիտարկման համար, որի նպատակն է բարելավել համայնքային անշարժ գույքի օգտագործումը և պահպանումը, կանխատեսել համայնքային անշարժ գույքի նկատմամբ համայնքի հեռանկարային պահանջը:
21. Համայնքային անշարժ գույքի հաշվառման տվյալների հավաստիության բարձր մակարդակն ապահովելու նպատակով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանած կարգով և ժամկետներում իրականացվում է անշարժ գույքի գույքագրում, որը հաստատվում է Աբովյան համայնքի ավագանու կողմից:
22. Սույն բաժնով սահմանված դրույթները տարածվում են Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքի հաշվառման և գույքագրման իրավահարաբերությունների վրա:
23. **Հիմնական միջոցների գույքագրում**
    1) Մինչև գույքագրում սկսելը պետք է ստուգել.
        ա) վերլուծական հաշվառման գրանցամատյանների (գույքային քարտեր, գույքային գրքեր, գույքային ցուցակներ և այլն) առկայությունը և վիճակը,
        բ) գույքի տեխնիկական անձնագրերի և տեխնիկական այլ փաստաթղթերի առկայությունը և վիճակը,
        գ) վարձակալության հանձնված կամ վարձակալված, ինչպես նաև ի պահ հանձնված կամ ընդունված հիմնական միջոցների փաստաթղթերի առկայությունը, փաստաթղթերի բացակայության դեպքում անհրաժեշտ է ապահովել դրանց ստացումը կամ ձևակերպումը:
    2) Հիմնական միջոցների գույքագրման ժամանակ հանձնաժողովը զննում է օբյեկտները և գույքագրման ցուցակներում գրանցում դրանց լրիվ անվանումները, համառոտ բնութագիրը (նշանակությունը, հիմնական տեխնիկական կամ շահագործման ցուցանիշները և այլն), թողարկման (կառուցման) տարեթիվը, գույքային, գործարանային և անձնագրային համարները:

3) Հիմնական միջոցների (այդ թվում հողամասերի, ջրավազանների և բնական ռեսուրսների այլ օբյեկտների) գույքագրման ժամանակ հանձնաժողովը ստուգում է հիմնական միջոցների օբյեկտների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի առկայությունը:
4) Հաշվառման մեջ չվերցված կամ այնպիսի օբյեկտների բացահայտման դեպքում, որոնց գծով հաշվապահական հաշվառման գրանցամատյաններում բացակայում են կամ նշված են դրանք բնութագրող ոչ ճիշտ տվյալներ, հանձնաժողովը պետք է գույքագրման ցուցակներում գրանցի այդ օբյեկտների վերաբերյալ ճշգրտված տվյալներ:
5) Գույքագրմամբ բացահայտված չհաշվառված օբյեկտների գնահատումը պետք է կատարվի՝ ելնելով հաշվապահական հաշվառման քաղաքականությունից՝ հիմնվելով համայնքում առկա համանման օբյեկտների գների կամ դրանց իրական արժեքների վրա:
6) Հիմնական միջոցները գույքագրման ցուցակներում գրանցվում են ըստ անվանումների՝ օբյեկտի հիմնական նշանակությանը համապատասխան: Եթե նախորդող գույքագրումից հետո փոփոխվել է օբյեկտի հիմնական նշանակությունը, ապա օբյեկտը գույքագրման ցուցակում գրանցվում է նոր նշանակությանը համապատասխան:
7) Գույքագրման պահին համայնքի տարածքից դուրս գտնվող հիմնական միջոցները գույքագրվում են մինչև դրանց ժամանակավոր բացակայությունը կամ համայնք վերադարձնելուց անմիջապես հետո:
8) Շահագործման և վերականգնման համար ոչ պիտանի հիմնական միջոցների համար գույքագրման հանձնաժողովը կազմում է առանձին գույքագրման ցուցակ՝ նշելով դրանց շահագործման հանձնելու ամսաթիվը և ոչ պիտանիության վիճակին հասնելու պատճառները (լրիվ մաշվածություն, փչացում և այլն):
9) Սեփական հիմնական միջոցների գույքագրմանը զուգընթաց գույքագրվում են նաև ի պահ ընդունված և վարձակալված հիմնական միջոցները:

24. Ոչ նյութական ակտիվների գույքագրում
1) Ոչ նյութական ակտիվների գույքագրման ժամանակ ստուգվում է՝
ա) համայնքի կողմից դրանց օգտագործման իրավունքները հաստատող փաստաթղթերի առկայությունը,
բ) հաշվապահական հաշվառման մեջ դրանց ճիշտ և ժամանակին արտացոլումը:

25. Անավարտ շինարարության և հետագա ժամանակաշրջանի ծախսերի գույքագրում
1) Անավարտ շինարարության գույքագրման ժամանակ անհրաժեշտ է՝
ա) ստուգել շինարարությունում գտնվող նախակատարվածքների (դետալների, ագրեգատների, հանգույցների), ինչպես նաև պատրաստման և հավաքման առումով անավարտ շինարարության փաստացի առկայությունը,
բ) ստուգել անավարտ շինարարության (նախակատարվածքների) փաստացի ավարտվածության (կոմպլեկտայնության) աստիճանը,
գ) բացահայտել չեղյալ հայտարարված, ինչպես նաև դադարեցված պատվերների գծով անավարտ շինարարության մնացորդները:

26. Դրամական միջոցների, դրամական փաստաթղթերի և խիստ հաշվառման փաստաթղթերի գույքագրումը.
1) Դրամարկղի գույքագրման ժամանակ ստուգվում է դրամական միջոցների փաստացի առկայությունը: Ստուգվում են նաև խիստ հաշվառման փաստաթղթերը:
2) Դրամական միջոցների գույքագրման ակտում ցույց են տրվում գույքագրման օրվա դրությամբ փաստացի և ըստ հաշվառման տվյալների մնացորդները, որոնց հիման վրա որոշվում են գույքագրման արդյունքները:
Դրամական փաստաթղթերի առկայության ստուգման ժամանակ պարզում են դրանցից յուրաքանչյուրի իսկությունը և ձևակերպման ճշտությունը: Ստուգումն իրականացվում է ըստ փաստաթղթերի առանձին տեսակների՝ ակտում նշելով դրանց սերիան, համարները, քանակը և ընդհանուր գումարը:

27. Գույքագրման հաշվետվությունների կազմումը.
1) Ակտիվների գույքագրման արդյունքների բացահայտման համար գույքագրման հանձնաժողովի կողմից կազմվում են համապատասխան հաշվետվություններ:

2) Հաշվետվություններում արտացոլվում են գույքագրման արդյունքները, այսինքն՝ նախորդ և ներկա գույքագրման ցուցակների տվյալների միջև տարբերությունները:
3) Գույքագրման արդյունքների ձևակերպման համար կարող են օգտագործվել միասնական գրանցամատյաններ, որտեղ միացված են գույքագրման ցուցակների և հաշվետվությունների ցուցանիշները:

28. Գույքագրման աշխատանքների ավարտից հետո համայնքային գույքի գույքագրման հանձնաժողովը կազմված հաշվետվությունը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնում է քաղաքապետին, որին կցվում են նաև համայնքի ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները: Ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին:
29. Գույքագրման աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը կարող է քննարկվել նաև համայնքապետարանի աշխատակազմում, գույքի կառավարումն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով:
30. Համայնքի կողմից սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու կամ օտարելու դեպքում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում և ընթացիկ քարտեզում /այդ թվում և հաշվեկշռում/ կատարում է համապատասխան փոփոխություններ և դրանց փոփոխման վերաբերյալ ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է քննարկման համայնքի ավագանու առաջիկա նիստում:

IV ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

31. Համայնքային գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտագործման նպատակով կարող է համայնքային գույքի կառավարման ամենամյա ծրագրերով օգտագործման տրամադրման առաջարկվել հետևյալ համայնքային գույքը՝
   1) հողամասերը.
   2) շենքերը, շինությունները.
   3) բնակարանները, հանրակացարանային սենյակները.
   4) տրանսպորտային միջոցները.
   5) գյուղատնտեսական և այլ տեխնիկան:
32. Համայնքային գույքը կարող է տրամադրվել օգտագործման՝
   1) անհատույց (մշտական կամ ժամանակավոր) օգտագործման իրավունքով.
   2) վարձակալության իրավունքով.
   3) կառուցապատման իրավունքով.
   4) սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) իրավունքով.
   5) կարճաժամկետ օգտագործման նպատակով:
33. Համայնքային գույքը օգտագործման կարող է ներկայացվել հետևյալ ձևերով՝
   1) մրցույթով.
   2) ուղղակի եղանակով:
34. Համայնքային գույքը օգտագործման է տրամադրվում ավագանու որոշմամբ՝ համայնքի ղեկավարի միջոցով:
35. Գույքն անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել սոցիալական, բարեգործական, համայնքի տնտեսական ակտիվության խթանման և համայնքի զարգացման ծրագրերով նախատեսված այլ նպատակներով:
36. Գույքն ուղղակի եղանակով օգտագործման է տրամադրվում օրենսդրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև պատճառաբանված հիմնավորման առկայության դեպքում:
37. Գույքի օգտագործման տրամադրման մրցույթները կազմակերպվում են հրապարակայնության և թափանցիկության պայմանների ապահովմամբ՝ համայնքի ավագանու կողմից ստեղծված մրցույթային հանձնաժողովի միջոցով:

«խնամի ջոհիզրպաո իսնամիոզոմի ասզոնոմ
Է ըսնիդստղՇ ո ըսնիհիսոզՇ ՇգվեռոմՇ ոզոշասս ջոհեցոմիսկզ ըսաոսկզ ասզոնոմ (4
«Ղգվե զվիռեիսզիոզրսկ ասկզսոսո զՇմսկ Լոմիսո ձզոմիզկզ
իսկզեցոմիսկզ ո Լոմսկզոմսզի զոմեեսզոիսիոզրսկ ասկզսոսո զՇմսկ Լոմիսո ձզոմիզկզ
իսկզցի, ՂզորիսոզզՇ վսոսկզ զոոիոեսկզ ասզոնոմիսո վՇզվորոսկ է ըսզեցոմիսկզ Ղգվեռոմզ,
զոոշասս ասզոնոմիսո զվսոոզ ասկզսոսո զՇմսկ Լոմիսո զվիռզվորոսկ Ղսոսոիսզկ վՇզվորոսկ (3
«իսիրոսոոմզ
ասկզեոմզ զվեռոմզ զոոշասս ասզոնոմ ,ըսզեոմիոոսոզՇա վոոսոսոգհոոմՇզվորոսկ
զոոիսոզզՇ ՂսզոզոսեեսիսոՇոսոոմ զոոշասս ասզոնոմ ,ըսզեոմիոոսոզՇա վոոսոսոգհոոմՇզվորոսկ (2
«զվիսոզ զվեզզ զիսեոմեզիոսոոմ ո զիսեոմեզոոիզ ոսն ո զոոշասս
վՇմիսեզ զվվոմՇզվորոսկ սեզզոսեեսիսոՇոսոոմ ըսզեցոմիսկզ զզ զվվոմիոեզն վՇզվորոսկ
իսսեզզՇզոսվոսոոմ վսս «զովսկսոսիզոոմ վՇզվորոսկ նաՇեոսվսիզոոմ ոզսեեսզոիոոիսոզ զզ
ըսզեցոոզոոիոսսվ սոոմոսեզվոոմ նաՇոսոոմՇ զոոոոսվոոոոոսոոմ զՇոոոոո

5) ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում համայնքի ղեկավարը կազմակերպում է տվյալ գույքի օտարման նախապատրաստական աշխատանքները:

49. Համայնքային գույքի օգտագործման տրամադրումը

1) համայնքային գույքի կառավարմամբ զբաղվող բաժինները, ելնելով համայնքային գույքի մոնիտորինգի արդյունքներից, համայնքի ղեկավարին է ներկայացնում առաջարկություններ՝ համայնքային գույքի օգտագործման տրամադրման, ինչպես նաև դրա վարձավճարի առավելագույն և նվազագույն չափերի մասին,
2) համայնքի ղեկավարը կարող է նշված առաջարկությունները քննարկման դնել համայնքապետարանի աշխատակազմում, ավագանու որոշման նախագիծ կազմելու նպատակով,
3) համայնքային գույքն օգտագործման տրամադրելու մասին ավագանու որոշման նախագիծը համայնքի ղեկավարը ներկայացնում է համայնքի ավագանու հերթական նիստի քննարկմանը՝ կցելով տեղեկանք տվյալ գույքն օգտագործման տրամադրելու հիմնավորվածության վերաբերյալ և ներկայացնելով տվյալ գույքն օգտագործման տրամադրելու համար սահմանվող վճարի նվազագույն և առավելագույն չափերը,
4) ավագանու որոշման նախագիծը քննարկվում և ընդունվում է համայնքի ավագանու կանոնակարգով սահմանված կարգով,
5) ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում համայնքի ղեկավարը կազմակերպում է տվյալ գույքն օգտագործման տրամադրելու նախապատրաստական աշխատանքները:

Աշխատակազմի քարտուղար՝ **Կ. Իվանյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 014-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Ա որոշման մեջ կատարել լրացում և որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի «Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը» «51» տողից հետո ավելացնել «52» տողը.

52.	Անասնաբույժ	3	140000

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԻԿ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱԶՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **Ա. Հակոբջանյան**

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 015-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 17-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և որոշման 2-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 և 2 հավելվածների:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԻԿ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱԶՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **Ա. Հակոբջանյան**

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի
ավագանու 2024թ. փետրվարի 16-ի թիվ 015-Ա
որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
«ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

(10 խումբ)

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստի-քային միավոր	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
1	2	3	4	5	6	7
1	Տնօրեն	1	1	1	226,800	226,800
2	Գլխավոր հաշվապահ	1	1	1	145,800	145,800
3	Գործավար	1	1	1	114,000	114,000
	Սիսիան քաղաք, 5 խումբ				-	-
4	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	1	1	124,200	124,200
5	Դաստիարակ	10	0.625	6.25	110,000	687,500
6	Լոգոպեդ	1	0.75	0.75	106,000	79,500
7	Խոհարար	1	1	1	104,000	104,000
8	Խոհարարի օգնական	1	1	1	104,000	104,000
9	Դաստիարակի օգնական	5	1	5	106,000	530,000
10	Երաժիշտ	1	1.25	1.25	110,000	137,500
11	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	1	1	110,000	110,000
12	Լվացարար	1	1	1	110,000	110,000
13	Տնտեսվար	1	1	1	120,000	120,000
14	Բուժքույր	1	1	1	104,000	104,000
15	Դռնապահ	1	1	1	104,000	104,000
16	Դերձակ	1	0.25	0.25	104,000	26,000
17	Օժանդակ բանվոր	1	1	1	104,000	104,000
18	Պահակ	1	1	1	104,000	104,000
	Ընդամենը Սիսիան	***31***		***26.5***		***3,035,300***
	Նորավան բնակավայր, 1 խումբ					
19	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200	62,100
20	Դաստիարակ	2	0.56	1.12	110,000	123,200
21	Խոհարար	1	0.75	0.75	104,000	78,000
22	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000	106,000
23	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
24	Հավաքարար	1	0.5	0.5	104,000	52,000
25	Լվացարար	1	0.5	0.5	104,000	52,000
	Ընդամենը Նորավան	***8***		***4.87***		***525,300***
	Շամբ բնակավայր, 1 խումբ					
26	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200	62,100
27	Դաստիարակ	2	0.56	1.12	110,000	123,200
28	Խոհարար	1	0.5	0.5	104,000	52,000
29	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000	106,000
30	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
31	Հավաքարար	1	0.5	0.5	104,000	52,000

	Ընդամենը Շամբ	***7***		***4.12***		***447,300***
	Աղիտու բնակավայր, 1 խումբ					
32	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200	62,100
33	Դաստիարակ	2	0.56	1.12	110,000	123,200
34	Խոհարար	1	0.5	0.5	104,000	52,000
35	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000	106,000
36	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
	Ընդամենը Աղիտու	***6***		***3.62***		***395,300***
	Վաղատին բնակավայր, 1 խումբ					
37	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,000	62,000
38	Դաստիարակ	2	0.56	1.12	110,000	123,200
39	Խոհարար	1	0.75	0.75	104,000	78,000
40	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000	106,000
41	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
	Ընդամենը Վաղատին	***6***		***3.87***		***421,200***
	Որոտնավան բնակավայր, 1 խումբ					
42	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,000	62,000
43	Դաստիարակ	2	0.56	1.12	110,000	123,200
44	Խոհարար	1	0.5	0.5	104,000	52,000
45	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000	106,000
46	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
	Ընդամենը Որոտնավան	***6***		***3.62***		***395,200***
	ԸՆԴԱՄԵՆԸ	***64***		***46.6***		***5,219,600***

Աշխատակազմի քարտուղար՝ **Կ. Իվանյան**

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի
ավագանու 2024թ. փետրվարի 16-ի թիվ 015-Ա
որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
«ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ

(11 խումբ)

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Աշխատակիցների թվաքանակ	Հաստիքային միավոր	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափ	Աշխատավարձն՝ ըստ դրույքաչափի
1	2	3	4	5	6	7
1	Տնօրեն	1	1	1	194,400	194,400
2	Գլխավոր հաշվապահ	1	1	1	124,200	124,200
3	Գործավար	1	1	1	104,000	104,000
	Սիսիան քաղաք, 4 խումբ					
4	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	1	1	124,200	124,200
5	Դաստիարակ	8	0.625	5	110,000	550,000
6	Հոգեբան	1	0.75	0.75	110,000	82,500
7	Խոհարար	1	1	1	104,000	104,000
8	Խոհարարի օգնական	1	1	1	104,000	104,000
9	Դաստիարակի օգնական	4	1	4	106,000	424,000
10	Երաժիշտ	1	1	1	110,000	110,000
11	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	0.75	0.75	110,000	82,500
12	Լվացարար	1	1	1	104,000	104,000
13	Տնտեսվար	1	1	1	104,000	104,000
14	Բուժքույր	1	1	1	104,000	104,000
15	Դռնապան	1	0.5	0.5	104,000	52,000
16	Հավաքարար	1	0.5	0.5	104,000	52,000
17	Դերձակ	1	0.25	0.25	104,000	26,000
18	Օժանդակ բանվոր	1	1	1	104,000	104,000
19	Պահակ	1	1	1	104,000	104,000
	ԸՆԴԱՄԵՆԸ Սիսիան	***29***		***23.75***		***2,653,800***
	Շաքի բնակավայր, 2 խումբ					
20	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200	62,100
21	Դաստիարակ	4	0.56	2.24	110,000	246,400
22	Խոհարար	1	0.75	0.75	104,000	78,000
23	Դաստիարակի օգնական	2	1	2	106,000	212,000
24	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
25	Դռնապան	1	0.5	0.5	104,000	52,000
26	Լվացարար	1	0.5	0.5	104,000	52,000
	ԸՆԴԱՄԵՆԸ Շաքի	***11***		***6.99***		***754,500***
	Բռնակոթ բնակավայր, 2 խումբ					
27	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200	62,100

28	Դաստիարակ	4	0.56	2.24	110,000	246,400
29	Խոհարար	1	1	1	104,000	104,000
30	Դաստիարակի օգնական	2	1	2	104,000	208,000
31	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
32	Տնտեսվար	1	0.5	0.5	104,000	52,000
33	Հավաքարար	1	0.5	0.5	104,000	52,000
34	Լվացարար	1	0.5	0.5	104,000	52,000
ԸՆԴԱՄԵՆը Բռնակոթ		***12***		***7.74***		***828,500***
	Դարբաս բնակավայր, 1 խումբ					
35	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200	62,100
36	Դաստիարակ	2	0.56	1.12	110,000	123,200
37	Խոհարար	1	0.75	0.75	104,000	78,000
38	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000	106,000
39	Բուժքույր	1	0.5	0.5	104,000	52,000
40	Լվացարար	1	0.5	0.5	104,000	52,000
ԸՆԴԱՄԵՆը Դարբաս		***7***		***4.37***		***473,300***
	Լոր բնակավայր, 1 խումբ					
41	Դաստիարակ	1	0.5	0.5	110,000	55,000
Ընդամենը Լոր		***1***		***0.5***		***55,000***
	Շենաթաղ բնակավայր, 1 խումբ					
42	Մեթոդիստ ուս. գծով տնօրենի տեղակալ	1	0.5	0.5	124,200.00	62,100.00
43	Դաստիարակ	1	0.56	0.56	110,000.00	61,600.00
44	Դաստիարակ	1	0.56	0.56	110,000.00	61,600.00
45	Խոհարար	1	0.5	0.5	104,000.00	52,000.00
46	Դաստիարակի օգնական	1	1	1	106,000.00	106,000.00
47	Բուժքույր	1	0.5	0.5	104,000.00	52,000.00
48	Պահակ	1	1	1	104,000.00	104,000.00
49	Տնտեսվար	1	0.5	0.5	104,000.00	52,000.00
50	Հավաքարար	1	0.5	0.5	104,000.00	52,000.00
	Ընդամենը Շենաթաղ	***9***		***5.62***		***603,300.00***
ԸՆԴԱՄԵՆԸ		***69***		***48.97***		***5,368,400***

Աշխատակազմի քարտուղար՝ Կ.Իվանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 016-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն համարվող գույքի /հողամասերի, շենքերի և շինությունների/ օտարման 2024 թվականի ծրագիրը հաստատելու մասին» թիվ 98-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման հավելվածի 1-ին տողում «36» թիվը փոխարինել «30» թվով, «ավտոտնակ» բառը փոխարինել «կիսանկուղ» բառով և «67608» թիվը՝ «56340» թվով.
   2) որոշման հավելվածի 2-րդ տողում «50» թիվը փոխարինել «50.2» թվով և «93900» թիվը՝ «94276» թվով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱԶՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբջանյան

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2024 թվականի թիվ 017-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 90-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Սիսիան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 90-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝
   «7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՇՈՏ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՈՎՍԵՓ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԹԱՄՐԱԶՈՎԱ ԲԵԼԼԱ

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ

ՅԱՋՈՒԼՅԱՆ ՆԱԽՇՈՒՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ

Համայնքի ղեկավար՝ **Ա. Հակոբջանյան**

2024թ. փետրվարի 16
ք.Սիսիան